

Խորհրդակցություն Արմավիրում՝ բոլոր մարզպետների մասնակցությամբ

10.04.2015

Ապրիլի 10-ին ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանն Արմավիրի մարզում խորհրդակցություն անցկացրեց Հայաստանի 10 մարզերի ղեկավարների հետ, խորհրդակցությանը մասնակցում էր նաև ՀՀ Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին աշնանացան ցորենի, դիզ. վառելիքի և ազոտական պարարտանյութի բաշխման հարցերը, ինչպես նաև՝ եկամուտների հավաքագրման գործընթացը: Իշխան Զաքարյանը ՏԿԱԻ նախարարին և մարզպետներին ներկայացրեց սույն թվականի օգոստոս ամսին Հայաստանում կայանալիք Համահայկական հերթական 6-րդ ամառային խաղերի կազմակերպմանն առնչվող հիմնախնդիրները: Ներկա դրությամբ՝ Համահայկական հերթական 6-րդ խաղերին մասնակցելու հայտ են ներկայացրել աշխարհի 3200 մարզիկներ: Քննարկելով կազմակերպչական աշխատանքների գործընթացը և տալով համապատասխան հանձնարարականներ՝ նախարար Երիցյանը շեշտեց, որ Համահայկական խաղերի կազմակերպման հարցում համատեղ աշխատանքի փորձ արդեն կա և այս անգամ նույնպես միջոցառումն իրականացվելու է բարձր մակարդակով: Մարզպետները նախարարին զեկուցեցին նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ մարզերում իրականացվող և իրականացվելիք միջոցառումների շուրջ տարվող աշխատանքների մասին: Մասնավորապես քննարկվել է գյուղացիներին սուբսիդավորված դիզվառելիքի տրամադրման հարցը: Նախարար Երիցյանը հատուկ շեշտեց, որ կառավարության նպատակն է այսօր օգնել գյուղացուն և այդ նպատակին միտված միջոցառումները լինելու են ՀՀ վարչապետի և իր վերահսկողության ներքո: ՏԿԱԻ նախարարին զեկուցեցին նաև, որ համայնքներում փաստաթղթաշրջանառությունը բարվոք վիճակում չէ: Արմեն Երիցյանը հանձնարարեց նախարարության աշխատակիցներին գործուղվել համապատասխան համայնքներ և տեղում օժանդակել խնդրի լուծմանը: «Նախարարությունը պետք է ամեն ինչ անի համայնքներին օժանդակելու և մարզերի բնակիչների կյանքը թեթևացնելու համար», - շեշտեց ՏԿԱԻ նախարարը: Նախարար Երիցյանը մի շարք հանձնարարականներ տվեց նաև համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի գործարկման վերաբերյալ, որպեսզի ծրագրի հնարավորությունները կիրառվեն առավելագույն արդյունավետությամբ: «Մարզպետները պետք է տեղում աշխատեն գյուղացիների հետ: Պետք է լուծվեն գյուղմթերքի մթերման, մինի-գործարանների ստեղծման հարցերը: Պետք է ամեն ինչ անենք, որ գյուղացին լավ ապրի», - ընդգծեց Արմեն Երիցյանը: Քննարկվեցին նաև մարզերում գործող վթարային դպրոցների վերակառուցման խնդիրները: ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը զեկուցեց, որ այս ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են տարվում: Ամփոփելով խորհրդակցությունը ՏԿԱԻ նախարարը նշեց, որ այսուհետ նման համամարզային խորհրդակցությունները լինելու են ամենամսյա և անցկացվելու են մարզերում: Հաջորդ խորհրդակցությունը կայանալու է մայիս ամսվա վերջին

Տավուշի

մարզում: